Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կանադա (Մոնրեալ)՝ 2023 թվականի դեկտեմբերի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամ (Multilateral Fund):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 93-րդ նիստում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Բազմակողմանի հիմնադրամի անդամավճարների և ծախսերի կարգավիճակը, ֆինանսական միջոցների հասանելիության հաշվեկշիռը, 2024, 2025 թվականների հաստատված և 2026 թվականի առաջարկվող բյուջեները:
   2. Մոնրեալի արձանագրության անդամ պետությունների կողմից ներկայացված հաշվետվություններն ու պարտականությունների չկատարման հնարավոր դեպքերը:
   3. Տարածաշրջանային օզոնային ցանցերի գործունեության գնահատման հաշվետվության արդյունքներն ու առաջարկությունները:
   4. Մոնրեալի արձանագրության անդամ պետությունների կողմից իրականացվող ծրագրերի իրականացման ընթացքները, հնարավոր ուշացումները:
   5. Մոնրեալի արձանագրության մի շարք անդամ պետությունների կողմից ներկայացված ծրագրային հայտերը:

6. Մոնրեալի արձանագրության Կիգալիի փոփոխությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես՝ 5-րդ հոդվածի երկրներում ՀՖԱ-ների փուլային կրճատման ծախսերի ուղեցույցների մշակում, սառնամատակարարման համակարգերի սպասարկման ոլորտում ՀՖԱ-ների ֆինանսավորման մակարդակի և եղանակների վերլուծություն, ՀՖԱ-ների փուլային կրճատման համար, էներգաարդյունավետության հարակից հարցեր:
7. Կիգալիի փոփոխության իրականացման ծրագրերի 1-ին փուլի շրջանակում կողմերի հետ պայմանագրերի նախագիծը:
8. Արդյունքների շրջանակ և Բազմակողմանի հիմնադրամի գործունեությանը համապատասխանող գնահատման քարտ:
9. Արտադրական ոլորտի հարցերն ուսումնասիրող աշխատանքային խմբի հաշվետվություն:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 92-րդ նիստի շրջանակներում տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները.

- Ղազախստանի ներկայացուցիչ պարոն Ա. Սարմանտաևի խնդրանքով և նախաձեռնությամբ տրամադրել եմ խորհրդատվություն Մոնրեալի արձանագրության իրավակարգավորումների, ինստիտուցիոնալ մեխանիզմների և դրանց կայացվածության վերաբերյալ, ինչը կարող է կիրառելի լինել Ղազախստանի համար:
- Մոնրեալի արձանագրության 5-րդ հոդվածի երկրների ներկայացուցիչների հետ իմ նախաձեռնությամբ քննարկել եմ COP28-ի շրջանակներում որոշ երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի կողմից «Գլոբալ սառնամատակարարման պարտավորագիր» (Global Cooling Pledge) փաստաթղթով ստանձնած պարտավորությունների իրագործելիության տեսլականը:
- Օրակարգային հարցերի քննարկման ժամանակ հայտնել եմ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների հետ նախապես համաձայնեցված դիրքորոշումները, քանի որ Հայաստանին էր վստահված եղել ներկայացնել տվյալ տարածաշրջանը:
- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղար տիկին Մ. Սեքիի հետ իմ նախաձեռնությամբ քննարկվել է Օզոնի քարտուղարության կողմից մշակված «Կարգավորվող նյութեր պարունակող խառնուրդների հաշվարկման գործիք» (Tool for mixtures and blends containing controlled substances) հաշվիչ գործիքում այնպիսի հնարավորության ստեղծումը, որը հնարավորություն կտա CO2 համարժեքով արտահայտված թիվը փոխակերպել մետրիկ տոննայի: Նախաձեռնությունս բխել է հայաստանյան տնտեսավարողներին մատուցվող ծառայությունների ընթացքում նոր կիրառվող գործիքի արդյունավետության և դյուրինության ավելացմանը:
- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղար տիկին Մ. Սեքիի հետ իմ նախաձեռնությամբ քննարկվել են հաջորդ տարի կայանալիք Վիեննայի կոնվենցիայի 13-րդ համաժողովի և Մոնրեալի արձանագրության կողմերի 38-րդ հանդիման խոշորամասշտաբ և միջազգային նշանակության միջոցառումները Հայաստանում անցկացնելու պայմաններն ու հնարավորությունները:

Հանդիսանալով Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների ներկայացուցիչ Քենիայի պատվիրակության կազմում՝ նախաձեռնել և հեղինակել եմ Գործադիր կոմիտեի 93-րդ նիստի որոշման նախագիծը Կիգալիի փոփոխության իրականացման ծրագրերի 1-ին փուլի ֆինանսական հատկացումների (tranches) մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ:



**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Ի թիվս այլ որոշումների, ընդունվել է իմ կողմից նախաձեռնված և հեղինակված որոշման նախագիծը հնգօրյա քննարկումներից և բանակցություններից հետո (տես՝ Հավելվածը):
- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղարի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ 2024 թվականի հունվարին «Կարգավորվող նյութեր պարունակող խառնուրդների հաշվարկման գործիք» (Tool for mixtures and blends containing controlled substances) հաշվիչ գործիքում քննարկված գործառույթն ավելացնելու վերաբերյալ:
- Օզոնի քարտուղարության Գործադիր քարտուղարի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ Հայաստանին տրամադրելու հաջորդ տարի կայանալիք Վիեննայի կոնվենցիայի 13-րդ համաժողովի և Մոնրեալի արձանագրության կողմերի 38-րդ հանդիման խոշորամասշտաբ և միջազգային նշանակության միջոցառումներ հյուրընկալելու գրավոր պայմանները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկում եմ դիտարկել Վիեննայի կոնվենցիայի 13-րդ համաժողովի և Մոնրեալի արձանագրության կողմերի 38-րդ հանդիման խոշորամասշտաբ և միջազգային նշանակության միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու հնարավորությունը:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*28.12.2023 թ.*

EXECUTIVE COMMITTEE OF
THE MULTILATERAL FUND FOR THE
IMPLEMENTATION OF THE MONTREAL PROTOCOL
Ninety-third Meeting
Montreal, 15–19 December 2023

## DRAFT DECISION ON AGENDA ITEM 15: OTHER MATTERS: MODALITIES FOR THE DISTRIBUTION OF FUNDING TRANCHES FOR KIGALI HFC IMPLEMENTATION PLANS
**(Submitted by the Government of Kenya)**

1. **The Executive Committee decided:**

(a) To request the Multilateral Fund Secretariat to prepare an analysis of the implications of decision 62/17 on the implementation of HCFC phase-out management plans to the 94th meeting of the Executive Committee, with a view to enable the Executive Committee to discuss whether and how to revise its approach for the timing and value of the final tranche of a multi-year agreement; and

(b) That, pending further decision on the matter by the Executive Committee, the Multilateral Fund Secretariat, in consultation with bilateral and implementing agencies, would finalize the tranche distribution of stage I of Kigali HFC implementation plans on a case-by-case basis.